ЮКЖД

*Ձեր բիզնեսի լոկոմոտիվը*

www.ukzhd.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ Երկաթուղային

\# 15 (62)

*ՀԿԵ ՓԲԸ-ի ամսաթերթ*

ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2018



## Եվրասիական տնտեսական միության երկաթուղիները տեխնիկական կարգավորման և չափագրության ոլորտում ստորագրեցին համագործակցության մասին համաձայնագիր

Հոկտեմբերի 2-ին Սոչիում «PRO//Երթևեկություն.1520» տրանսպորտա-լոգիստական համաժողովի շրջանակներում «Ռուսաստանի երկաթուղիներ» ԲԲԸ-ն, «Բելառուսի երկաթուղի» պետական միավորումը, Ազգային ընկերություն «Ղազախստան թեմիր ժոլի» ԲԸ-ն, Ազգային ընկերություն «Ղրղզ թեմիր ժոլու» պետական ձեռնարկությունը և ՀԿԵ ՓԲԸ-ն տեխնիկական կարգավորման և չափագրության ոլորտում ստորագրեցին համագործակցության մասին համաձայնագիր: «Ռուսաստանի երկաթուղիներ» ԲԲԸ-ի կողմից փաստաթուղթը ստորագրեց գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր ինժեներ Սերգեյ Կոբզևը, ՀԿԵ ՓԲԸ-ի կողմից՝ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն: Համաձայնագիրը նախատեսում է կողմերի համագործակցություն տեխնիկական միջոցների սպասարկման և պահպանման հետ կապված գործընթացների, երկաթուղային տրանսպորտում մատուցվող ծառայությունների, ինչպես նաև երկաթուղային արտադրանքի հանդեպ պահանջներ սահմանող նորմատիվային տեխնիկական փաստաղթերի պլանավորման, մշակման, համաձայնեցման, կիրառման, վերանայման և չեղարկման, տեխնիկական կարգավորման և չափագրության ոլորտում նորմատիվային փաստաթղթերով տեղեկատվական փոխանակման և աշխատանքի կազմակերպման նորմավորման ոլորտներում:



## Հայաստանի և Ռուսաստանի տրանսպորտի նախարարները քննարկեցին Հարավկովկասյան երկաթուղու աշխատանքը

ՌԴ Տրանսպորտի նախարարությունում նոյեմբերի 22-ին կայացավ Հայաստանի և Ռուսաստանի տրանսպորտի նախարարներ Հակոբ Արշակյանի ու Եվգենի Դիտրիխի հանդիպումը:

Նախարարներն ընդգծեցին Հարավկովկասյան երկաթուղի ՓԲԸ աշխատանքի կարևորությունը Հայաստանի տնտեսական զարգացման տեսանկյունից: Կողմերը բարձր գնահատեցին երկաթուղու գործունեության արդյունքները՝ գնացքների արագությունների աճը, վթարների թվի կրճատումը, ենթակառուցվածքի զարգացումը:

Քննարկվեց նաև 2008 թվականի փետրվարի 13-ին կնքված Հայաստանի երկաթուղային համակարգի Ռուսական երկաթուղիներ ԲԲԸ-ի կողմից ստեղծված Հարավկովկասյան երկաթուղի ՓԲԸ-ի կառավարմանը հանձնելու մասին կոնցեսիոն պայմանագրի կարևորությունը:

Նախարարները նշեցին ՀԿԵ-ի մասնակցությամբ Հայաստանի երկաթուղիների զարգացման ռազմավարության լրամշակման նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով կոնցեսիոն պայմանագրով նախատեսված փոխադարձ պարտավորությունները:

Կողմերն անդրադարձան երկկողմանի փոխադրումների իրականացման համար առանցքային նշանակություն ունեցող Կովկաս-Փոթի-Կովկաս լաստանավի աշխատանքի կատարելագործմանը: Դրական գնահատվեցին երկաթուղային ուղևորափոխադրումների զարգացմանն ուղղված միջոցառումները՝ մասնավորապես երկու ժամանակակից ԷՊ2Դ էլեկտրագնացքների գնումը: Գնացքներից մեկն արդեն աշխատում է Երևան-Գյումրի-Երևան երթուղում, իսկ երկրորդը նույն երթուղում շահագործման կհանձնվի 2019 թվականի առաջին եռամսյակում:

Հայկական կողմը հայտնեց նման էլեկտագնացքների Երևան-Սևան-Երևան երթուղում գործարկման իր հետաքրքրությունը:

Հանդիպման ավարտին նախարարները քննարկեցին Վերին Լարս անցակետի աշխատանքի կատարելագործման հարցերը, ավտոմոբիլային փոխադրումների զարգացման հեռանկարները:



## ՀԿԵ ՓԲԸ պատվիրակությունը մասնակցեց Համագործակից երկրների երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի 69-րդ նիստին

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոյի գլխավորած պատվիրակությունը մասնակցեց Համագործակից երկրների Երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի 69-րդ նիստին, որը կայացավ հոկտեմբերի 18-19-ը Մոսկվայում:

Նիստին մասնակցում էին Հայաստանի, Բելառուսի, Ղրղզստանի, Ղազախստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Ադրբեջանի երկաթուղային վարչությունների ներկայացուցիչները, ինչպես նաև ասոցացված անդամների՝ Բուլղարիայի, Վրաստանի, Լատվիայի և Ֆինլանդիայի պատվիրակները:

Դիտորդների կարգավիճակով ներկայացված են եղել Իրանի երկաթուղին և Երկաթուղայինների և տրանսպորտային շինարարների արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան: Կառույցի հետ համագործակցեցին նաև Լիտվայի և Էստոնիայի երկաթուղիները:

Խորհրդակցության շրջանակներում նախատեսվում էր քննարկել 12 հարց, մասնավորապես երկաթուղային ցանցի ընդհանուր աշխատանքի և ուղևորափոխադրումների ոլորտի 2018 թվականի 9 ամիսների արդյունքները, 2018-2019 թթ միջազգային հաղորդակցությունում գնացքների և բեռնատար գնացքների չվացուցակների մշակումը, 2019 թ միջազգային հաղորդակցությունում բեռնափոխադրումների ոլորտում սակագնային քաղաքականությունը:

# ՀԿԵ-ն և GPM Gold-ը ստորագրեցին բեռնափոխադրումների իրականացման մասին պայմանագիր

**«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ և GeoProMining Gold ՍՊԸ գլխավոր տնօրեններ Սերգեյ Վալկոն և Անատոլի Գոգոտինը դեկտեմբերի 14-ին ստորագրել են 2019 թվականին Սոթքի հանքավայրից Արարատի ոսկու կորզման ֆաբրիկա ոսկու հանքաքարի փոխադրումներ կազմակերպելու մասին պայմանագիրը:**

Պայմանագրի համաձայն 2019 թվականին 269 կիլոմետր երկարությամբ Սոթք - Արարատ երկաթուղով հանքա քարի փոխադրման ծավալը կկազմի 1,5 մլն տոննա, ինչը 2018 թվականի ցուցանիշի համեմատությամբ 10%-ով ավելի է: 2017 թվականին այդ ուղղությամբ հանքաքարի փոխադրման ծավալը կազմել էր 1,18 մլնտոննա:

Ինչպես նշեց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն, GeoProMining Gold-ն երկաթուղու հիմնական գործընկերներից մեկն է, իսկ ոսկու հանքաքարի փոխադրումները կազմում են ընկերության ներհանրապետական փոխադրումների գրեթե կեսը:

- Արարատի ֆաբրիկա հանքաքարի անխափան փոխադրումն ապահովելու համար Հարավկովկասյան երկաթուղին հատուկ ուշադրություն է դարձնում տվյալ երկաթուղային երթուղու զարգացմանը՝ կապիտալ վերանորոգվել է 7 կմ գիծ, վերջին երեք տարիներին փոխարինվել 50 հազար երկաթբետոնե կոճ, արդիականացվել ազդանշանային, կենտրոնացման և արգելափակման համակարգերը, վերականգնվել է 1989 թվականից չշահագործվող Ջող կայարանի էլեկտրակենտրոնացման համակարգը: Միայն վերջին նախագծի արժեքը կազմել է 50 մլն դրամ, իսկ գծի կապիտալ վերանորոգմանն ուղղվել է 800 մլն դրամ: Իրականացված աշխատանքները թույլ են տվել իրականացնել հումքի փոխադրումները Ջողից Արարատ ըստ չվացուցակի, ավելացնել գնացքների արագությունները, ապահովել բեռների անվտանգությունը, - ասաց ՀԿԵ ղեկավարը, նշելով, որ այս նախագիծը երկու ընկերությունների փոխշահավետ համագործակցության ամենավառ օրինակներից է:

Ս.Վալկոն նաև նշեց, որ մշակվում է երկաթուղու շարժակազմի թարմացման ծրագիրը և 3 տարիների ընթացքում ՀԿԵ-ն նախատեսում է գնել մոտ 200 նոր վագոններ՝ հիմնականում GPM Gold-ի կողմից պահանջված տեսակների:

Իր հերթին GeoProMining Gold ՍՊԸ գլխավոր տնօրեն Անատոլի Գոգոտինը նշեց, որ ստորագրված պայմանագիրը ոչ միայն թույլ կտա 10%-ով ավելացնել հանքի բեռնափոխադրումների ծավալները ոսկու կորզման գործարան, այլև 50 հաստիքով ավելացնել ընկերության աշխատողների թիվը, ինչը դրական ազդեցություն կունենա տարածաշրջանում սոցիալական վիճակին:

- «ԳեոՊրոՄայնինգ գոլդ» և «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունները ակտիվորեն զարգացնում են փոխշահավետ համագործակցությունը, տարեցտարի գրանցելով ՀՀ պետական բյուջե վճարումների կայուն աճ, միասին ապահովելով ավելի քան 4000 աշխատատեղ: Մեր ընկերությունները համատեղ աշխատում են արդեն 10 տարի, և եթե համագործակցության սկզբին փոխադրումների ծավալները մեկ գնացքում կազմում էին 10-17 վագոն, ապա այժմ դրանց թիվն արդեն 30 է: Վստահ եմ, որ գալիք 2019 թվականին նույնպես մեր փոխհամագործակցությունը կշարունակվի, առանց որի մեր ընկերությունների հաջող գործունեությունը դժվար է պատկերացնել, - հայտարարեց Ա.Գոգոտինը:

2018 թվականի առաջին կիսամյակի տվյալներով «ԳեոՊրոՄայնինգ գոլդ» ընկերությունը ՀՀ պետական բյուջե է վճարել 8,871 մլրդ դրամ, զբաղեցնելով 4-րդ տեղը հանրապետության խոշոր հարկ վճարողների ցանկում (8,163 մլրդ 2017 թվականի նույն ժամանակահատվածի համար): Նշենք նաև, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը նույն ժամանակահատվածի համար ՀՀ պետական բյուջե է վճարել 1,963 մլրդդրամ, Հայաստանի խոշոր հարկ վճարողների ռեյտինգում գրավելով 39 -րդ հորիզոնականը (1,887 մլրդ. դրամ 2017 թ. առաջին կիսամյակի համար):

«ԳեոՊրոՄայնինգ գոլդ» ընկերությունը մտնում է «ԳեոՊրոՄայնինգ» միջազգային ընկերությունների խմբի կազմի մեջ: 2007-2017 թվականների ընթացքում Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան և



Սոթքի հանքավայրը ամբողջությամբ նորացվել են: 2008 թվականից ի վեր Սոթքի հանքավայրի տեխնիկական վերազինման և Արարատի ֆաբրիկայի վերակառուցման համար ընկերությունը ներդրել է 200 մլն. ԱՄՆ դոլար: Ներկայումս ընկերությունում աշխատում են 1 240 մարդ, որոնցից 753-ը Սոթքի հանքում, 432-ը Արարատի ֆաբրիկայում: Ընդհանուր առմամբ Հայաստանում աշխատելու 10 տարիների ընթացքում «ԳեոՊրոՄայնինգ»-ը կատարել է 500 մլն. ԱՄՆ դոլարի ներդրում:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն հանդիսանում է «Ռուսական երկաթուղու» 100%-նոց դուստր ձեռնարկությունը, և 2008 թվականից իրականացնում է Հայաստանի երկաթուղու կոնցեսիոն կառավարումը: 2008-2017 թվականների ընթացքում ենթակառուցվածքների զարգացման և շարժակազմի նորացմանն ընկերությունն ուղղել է 260 մլն. դոլար: Հարավկովկասյան երկաթուղին Հայաստանի խոշորագույն գործատուներից մեկն է. Ընկերությունում աշխատում է ավելի քան 3 հազար մարդ:

# ՀԿԵ-ն շարունակում է ընդունել Կովկաս-Փոթի-Կովկաս լաստանավային բեռնափոխադրումների հայտեր



«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն շարունակում է ընդունել Կովկաս-Փոթի-Կովկաս լաստանավային բեռնափոխադրումների հայտեր:

Երկաթուղին հիշեցնում է, որ 05.11.2018 թ. բեռնափոխադրողները և էքսպեդիտորները նամակով տեղեկացվեցին լաստանավի չվերթների ժամանակավոր կրճատման մասին: Հաշվի առնելով լաստանավի վարձակալության վճարի թանկացումը և բեռնափոխադրումների ծավալի կրճատումը, Կովկաս-Փոթի-Կովկաս լաստանավի կանոնավոր աշխատանքը փոխարինվեց փաստացի առկա խոշոր խմբաքանակների (30 վագոն) փոխադրման, ինչպես նաև հաճախորդների միանվագ պատվերների կատարման ձևաչափով:

Հարավկովկասյան երկաթուղու աշխատանքում, Կովկաս-Փոթի երթուղում բեռնափոխադրումներ իրականացնելու տեսանկյունից, արմատական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Ցանկացած ընկերություն կարող է պատվիրել բեռնափոխադրում նշված երթուղում:

Հարկ է նշել, որ երկաթուղալաստանավային փոխադրումների մրցակցությունն ապահովելու նպատակով Ռուսական երկաթուղիները և ՌԴ Սակագների դաշնային ծառայությունը 2019 թվականին Կովկաս-Փոթի երթուղով բեռնափոխադրումների համար սահմանել են զեղչ՝ մինչև 50% չափով:

# ՀԿԵ-ն ճանաչվել է «Panarmenian EXPO 2018» միջազգային ցուցահանդեսին ներկայացված իր ոլորտի լավագույն ընկերություն

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն Երևանում հոկտեմբերի 12-14-ը անցած «Panarmenian EXPO 2018» 9-րդ միջազգային ցուցահանդես-համաժողովի արդյունքներով ճանաչվեց իր ոլորտի լավագույն մասնակից-ընկերություն: Ցուցահանդեսը կազմակերպել էին Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատը և «Պրոմ Էքսպո» ցուցահանդեսային ընկերությունը: Ընկերության ներկայացուցիչներին հանձնվեցին համապատասխան հավաստագրեր ու «Ոլորտի առաջատար» պարգև:

Ցուցահանդեսին մասնակցում էին Հայաստանը, Արցախը, Ռուսաստանը, Գերմանիան, Հնդկաստանը ներկայացնող ավելի քան 100 ընկերություններ, որոնք աշխատում են արդյունաբերության, շինարարության, բեռնափոխադրումների, տպագրության, տուրիզմի, գյուղատնտեսության, կահույքագործության ոլորտներում: Ցուցահանդեսի այցելուները ծանոթացան երկաթուղու գործունեության հիմնական ուղղություններին, բեռնափոխադրումների զարգացման հեռանկարներին, ինչպես նաև Հայաստանի տարածքով Եվրոպայից Իրան և հակառակ ուղղությամբ մուլտիմոդալ բեռնափոխադրումների իրականացման ծրագրին, Հայաստանի երկաթուղային տրանսպորտի զարգացման նախագծերին, երկաթուղային ուղևորափոխադրումների աշխարհագրությանը, զբոսաշրջային տուրերին:












# ՀԿԵ-ի աջակցությամբ ավարտվեց Ալավերդու թիվ 3 մանկապարտեզի վերանորոգման հերթական փուլը

**Ավարտվեց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ հերթական բարեգործական ծրագիրը՝ Լոռու մարզի Սանահին կայարանում գտնվող Ալավերդու թիվ 3 մանկապարտեզի վերակառուցումը:**

Երկաթուղու և այլ բարերարների աջակցությամբ վերանորոգվել է և ջեռուցման համակարգով, կենցաղային տեխնիկայով, հարմարավետ կահույքով հագեցվել մակնապարտեզի նորակառույց մասնաշենքը:

Բացման արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության Արտակարգ և Լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը, «ՀԿԵ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն, Ալավերդու քաղաքապետ Սասուն Խեչումյանը, Հայաստանում Ռուսաստանի առևտրական ներկայացուցչության ղեկավար Անդրեյ Բարկոն և այլք:

Ինչպես նշեց դեսպան Սերգեյ Կոպիրկինը, չնայած Հարավկովկասյան երկաթուղու հիմնական գործառույթն է Հայաստանի երկաթուղային համակարգի շահագործումը՝ բարեգործական ծրագրերը գտնվում են ընկերության ուշադրության կենտրոնում:





- Այն, ինչ արել է ՀԿԵ-ն հայ գործընկերների, տեղական ինքնակառավարման մարմինների, մանկապարտեզի տնօրինության հետ համագործակցությամբ, բարձր գնահատականի է արժանի: Այս և Հայաստանում գործող այլ ռուսաստանյան ընկերությունների նման գործունեությունը էական ներդրում է հայ-ռուսական բարեկամական, եղբայրական դարավոր հարաբերությունների հիմքն ամրապնդելու գործում, - ասաց դեսպանը:

«ՀԿԵ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն իր հերթին հիշեցրեց, որ դա սույն նախադպրոցական կրթական հաստատությանը տրամադրված օժանդակության առաջին փորձը չէ. երկու տարի առաջ Ընկերությունը այլ բարերարների հետ համատեղ վերանորոգել է մանկապարտեզի մասնաշենքը, հիմնանորոգել մանկապարտեզի առաջին հարկը, պատրաստել մանկական կահույք:

- Այսօրվա տոնը մեր երկամյա աշխատանքի, Սանահինի մանկապարտեզին և մանուկներին աջակցության հերթական քայլն է: Հուսամ, որ մեր կողմից կատարված աշխատանքները թույլ կտան ավելացնել մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը և ներկայիս 35-ի փոխարեն այստեղ կհաճախեն արդեն 50 փոքրիկ սանահինցիներ, - ասաց Ընկերության ղեկավարը:

ՀԿԵ-ի գլխավոր տնօրենը նշեց, որ վերանորոգման աշխատանքներին Ընկերությունը հատկացրել է 22 մլն դրամ, իսկ Հայաստանի երկաթուղու կառավարչի ընդհանուր բարեգործական բյուջեն 2011 թվականից սկսած կազմել է 318 մլն դրամ:

Բարեգործությունը միշտ եղել և շարունակում է մնալ Հարավկովկասյան երկաթուղու գործունեության առավել կարևոր ուղղություններից մեկը: Ընկերությունը շարունակում է իրականացնել կրթական հաստատությունների, վետերանների, մանկատների և գիշերօթիկների սաների աջակցությանն ուղղված նախագծեր:

Այսպես, երկաթուղու հատկացված միջոցներով Ֆիոլետովո գյուղի դպրոցում վերանորոգվել և անհրաժեշտ տեխնիկայով է հագեցվել ինտերակտիվ ուսուցման և աշխատանքային ուսուցման դասասենյակները, փոխվել են երկրորդ հարկի լուսամուտները, վերանորոգվել միջանցքը, վերակառուցվել մարզադահլիճը, որը չէր շահագործվում 1988 թվականի երկրաշարժից հետո, ինչպես նաև վերականգնվել ջեռուցման համակարգը և տանիքը, կոսմետիկ վերանորոգվել դպրոցի մասնաշենքերը: Իսկ դպրոցի գրադարանն ամեն տարի Ընկերության կողմից ստանում է նոր դասագրքեր և ուսումնական նյութեր, գեղարվեստական գրականություն:

Ուշադրության կենտրոնում են նաև վետերան-երկաթուղայինները. Հարավրովկասյան երկաթուղին արդեն վերանորոգել է Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների հինգ տուն Գյումրիում, Կոտայքի մարզի Սոլակ գյուղում և Երևանում:

# Երկաթուղում շարունակվում է երթևեկության ավտոմատացումը

**«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ հանձնաժողովը ընկերության գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոյի գլխավորությամբ ուսումնասիրեց Սևան-Զոդ հատվածի ենթակառուցվածքի պատրաստվածության մակարդակը ձմեռային աշխատանքին:**



Բացի այդ, հանձնաժողովը ստուգեց Նորժա-Զոդ հատվածում 90-ականների սկզբից չշահագործվող միկրոպրոցեսորային արգելափակման կիսաավտոմատ համակարգի վերականգնման ընթացքը: Տարվող աշխատանքների շրջանակներում տեղադրվեցին 135 կմ օպտիկամանրաթելային մալուխներ: Ներդրումների ծավալը կազմում է 96,4 մլն դրամ:

Իսկ աշխատանքների ավարտին ապահովվելու է առանց կանգառների երթևեկություն Արարատ-Զոդ հատվածի ամբողջ երկայնքով:

Սևան-Զոդ հատվածն ամփոփում է այս երթուղում ազդանշանային, կենտրոնացման և արգելափակման համակարգի վերականգնման ծրագիրը: Զոդ կայարանում սլաքների և ազդանշանների էլեկտրական կենտրոնացման համակարգի ներդրումը թույլ է տալիս կրճատել մեխանիկական աշխատանքը և շարժակազմի մանևրման ժամանակը, բարձրացնել գնացքների երթևեկության անվտանգության մակարդակը, ինչպես նաև անցնել ժամանակակից օպտիկամանրաթելային կապի կիրառմանը:

2017 թվականի դեկտեմբերին վերականգնվեց Երևանի Կարմիր Բլուր կայարանի էլեկտրակենտրոնացման համակարգը, որը չէր գործում 90-ականների սկզբից: Բոլոր աշխատանքները կատարվել են առանց միջնորդ ընկերությունների և բացառապես Հարավկովկասյան երկաթուղու ավտոմատացման, հեռամեխանիկայի և կապի ձեռնարկության աշխատակիցների ջանքերով:

Հարավկովկասյան երկաթուղու գործունեության շրջանում երկաթուղում արդեն վերականգնվել է էլեկտրակենտրոնացման 9 կետ, այդ թվում երեքը՝ զրոյից (Զոդ, Կարմիր Բլուր և Դալարիկ կայարաններում): 2008 թվականից ավտոմատացման, հեռամեխանիկայի և կապի միջոցների արդիականացմանը ՀԿԵ-ն ուղղել է 3,5 մլրդ դրամ:

2019 թվականի ծրագրով նախատեսվում է Ղալթախչի կայարանի էլեկտրակենտրոնացման համակարգի արդիականացումը, այդ թվում՝ աշխատակիցների աշխատանքի պայմանների բարելավման համար նոր շենքի կառուցումը:



# ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԻՆ

## 50

**07.11.1968** Մկրտումյան Արամ Զավենի: Վանաձորի գծի ուղեմաս, գծի մոնտյոր
**03.12.1968** Պապիկյան Մերուժան Փայլակի: Գյումրիի գծի ուղեմաս, գծի մոնտյոր
**20.11.1968** Բարսեղյան Խաչատուր Ռազմիկի: Գյումրիի գծի ուղեմաս, դրեզինի մեքենավար
**16.11.1968** Ավդալյան Արսեն Հայկի: Սևանի գծի ուղեմաս, գծի մոնտյոր
**25.11.1968** Դավթյան Անդրանիկ Ռուդիկի: Մասիսի գծային մեքենայացված կայան, դրեզինի մեքենավար
**01.11.1968** Քելեշյան Հարություն Վարդանի: Էլեկտրաֆիկացիայի և էլեկտրամատակարարման ձեռնարկություն, էլեկտրամոնտյոր
**16.01.1969** Փարեմուզյան Լիպարիտ Վրույրի: Էլեկտրաֆիկացիայի և էլեկտրամատակարարման ձեռնարկություն, հերթապահ էլեկտրամեխանիկ
**02.01.1969** Ալեքսանյան Հովհաննես Ռաֆիկի: Ավտոմատիկայի, հեռամեխանիկայի և կապի ձեռնարկություն, ավագ էլեկտրամեխանիկ
**01.01.1969** Հակոբյան Անուշ Արմենակի: «Վանաձոր» գծային-կայարանային միավորում, կայարանապետ
**08.11.1968** Մկրտչյան Վահագն Կառլենի: «Սևան» գծային-կայարանային միավորում, կայարանի հերթապահ
**11.01.1969** Սահակյան Արայիկ Յուրիկի: Գյումրիի լոկոմոտիվային դեպո, մանևրային աշխատանքների մեքենավար
**21.01.1969** Բաքայան Սուրեն Ֆրոնտիկի: Գյումրիի վագոնային դեպո, վագոնների ավագ զննող-վերանորոգող
**05.01.1969** Վարդնյան Կարինե Մարտիկի: Անվտանգության ծառայություն, տնտեսագետ
**16.12.1968** Օհանյան Տիգրան Սեյրանի: Անվտանգության ծառայություն, անձնակազմի պետի տեղակալ

## 60

**10.01.1959** Մացակյան Սեյրան Վլադիմիրի: Վանաձորի գծի ուղեմաս, գծանցի հերթապահ
**02.01.1959** Դանիելյան Մկրտիչ Բաբկենի: Գյումրիի գծի ուղեմաս, գծի մոնտյոր
**14.12.1958** Մարգարյան Գառնիկ Մկրտիչի: Գյումրիի գծի ուղեմաս, գծի մոնտյոր
**25.01.1959** Վալեսյան Վալես Արփակի: Գյումրիի գծի ուղեմաս, ազատված բրիգադավար
**05.01.1959** Խաչատրյան Նորայր Ժորայի: Երևանի գծի ուղեմաս, գծի մոնտյոր
**02.12.1958** Մկրտչյան Սաշիկ Աշոտի: Սևանի գծի ուղեմաս, գծի մոնտյոր
**02.12.1958** Ասատրյան Վլադիկ Հայկազի: Սևանի գծի ուղեմաս, դրեզինի մեքենավար
**30.12.1958** Ռշտունյան Լևոն Անտոնի: Սևանի գծի ուղեմաս, պահակ
**21.12.1958** Հակոբյան Սամվել Ժորայի: Սանահինի մեքենայացված ուղեմաս, գծի վերանորոգման ավտոմեքենայի վարորդ
**15.12.1958** Ալեքյան Համլետ Խաչատուրի: Էլեկտրաֆիկացիայի և էլեկտրամատակարարման Ձեռնարկություն, ավագ էլեկտրամեխանիկ
**31.01.1959** Չամակյան Մարտուն Կառլենի: Էլեկտրաֆիկացիայի և էլեկտրամատակարարման ձեռնարկություն, հերթապահ էլեկտրամեխանիկ
**04.11.1958** Ղալեճյան Արտուշ Արշալույսի: Էլեկտրաֆիկացիայի և էլեկտրամատակարարման ձեռնարկություն, հերթապահ էլեկտրամեխանիկ
**05.01.1959** Եղիազարյան Վանիկ Դերենիկի: Էլեկտրաֆիկացիայի և էլեկտրամատակարարման ձեռնարկություն, հերթապահ էլեկտրամեխանիկ
**26.11.1958** Հովհաննիսյան Ալբերտ Հովսեպի: Ավտոմատիկայի, հեռամեխանիկայի և կապի ձեռնարկություն, էլեկտրամեխանիկ
**21.12.1958** Վարդանյան Հայկ Անուշավանի: Ավտոմատիկայի, հեռամեխանիկայի և կապի ձեռնարկություն, ավագ էլեկտրամեխանիկ
**10.01.1959** Կարապետյան Մարատ Հրաչիկի: Ավտոմատիկայի, հեռամեխանիկայի և կապի ձեռնարկություն, հերթապահ էլեկտրամեխանիկ
**16.12.1958** Ամիրյան Սամվել Սերյոժայի: Ուղևորափոխադրումների տնօրինություն, տոմսային գանձապահ
**10.11.1958** Գրիգորյան Մարգարիտ Բաբկենի: Փոխադրումների տնօրինություն, առաջատար տնտեսագետ
**05.01.1959** Պետրոսյան Մերուժան Բուրդուկի: «Վանաձոր» գծային-կայարանային միավորում, գլխավոր կոնդուկտոր
**17.01.1959** Քալայան Հովսեպ Գրիգորի: «Երևան» գծային-կայարանային միավորում, գլխավոր կոնդուկտոր
**30.01.1959** Կարապետյան Անդրանիկ Արտաշի: Գյումրիի լոկոմոտիվային դեպո, Էլեկտրաքարշի մեքենավարի օգնական
**24.01.1959** Ծոլինյան Գագիկ Սանդրոյի: Գյումրիի լոկոմոտիվային դեպո, Ջերմաքարշի մեքենավար
**01.01.1959** Էլամիրյան Նորայր Ժորժիկի: Գյումրիի լոկոմոտիվային դեպո, Էլեկտրաքարշի մեքենավար
**24.01.1959** Առաքելյան Սուսաննա Նվերի: Գյումրիի լոկոմոտիվային դեպո, հանգստյան տան հերթապահ
**16.11.1958** Ասրյան Հայկազ Դուրմիշի: Գյումրիի վագոնային դեպո, ավագ զննող-վերանորոգող
**18.11.1958** Քոսյան Սամվել Աշոտի: Հակահրդեհային և վերականգնողական գնացքներ, քարշափոխավար
**06.01.1959** Հայրապետյան Նազիկ Խաչիկի: Նյութատեխնոլոգիական ապահովման Տնօրինություն, հավաքարար

# Երկաթուղայինների թիմը հաղթեց ռուսական խոհանոցի մրցույթում

**«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ թիմը հաղթեց Մոսկվայի տան կողմից կազմակերպված ռուսական խոհանոցի ճաշատեսակների պատրաստման մրցույթում, որը կայացավ հոկտեմբերի 7-ին Մանկական այգում:**

Մրցույթում մասնակցում էր 7 թիմ, որոնք ներկայացնում էին Հայաստանում Ռուսաստանի դեսպանատունը, Երևանում Գիտության և կրթության ռուսական կենտրոնը, ՎՏԲ Հայաստան բանկը, ՀԿԵ ՓԲԸ-ն, Ռուսալ-Արմենալ գործարանը, Կ. Ս. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնը, «Sputnik Արմենիա» լրատվական գործակալությունը և ռադիոն:




Երևանյան ջերմ արևի շողերի տակ և ռուսական ժողովրդական երգերի զվարթ հնչյունների ուղեկցությամբ մասնակիցները ցուցադրեցին իրենց խոհարարական տաղանդները՝ պատրաստելով ավանդական ռուսական ուխա և նրբաբլիթներ: Իսկ լավագույններին ընտրեց հեղինակավոր ժյուրին՝ մոսկովյան ռեստորանագետ, խոհարար, խոհարարական քննադատ Գայանե Բրեհովայի գլխավորությամբ:

Արդյունքում լավագույնը ճանաչվեց Հարավկովկասյան երկաթուղու թիմը, որը վաստակեց 183 միավոր, երկրորդ տեղում էր Ռուսալ-Արմենալը՝ 178 միավորով, իսկ երրորդ տեղում՝ Կ. Ս. Ստանիսլավսկու անվան թատրոնը՝ 170 միավորով:

Երկաթուղայինների թիմի կազմում էին Ֆիրմային տրանսպորտային սպասարկման ճանապարհային կենտրոնի պետ Դմիտրի Գվոզդևը, նույն կենտրոնի մարքեթինգի, վերլուծության և սակագնային քաղաքականության բաժնի պետ Լիանա Զաքարյանը, միջազգային կապերի և վարչական մարմինների հետ փոխգործակցության բաժնի պետի տեղակալ Լիանա Մովսիսյանը, ով հաղթել էր նաև միրգ-բանջարեղենի լավագույն գիտելիքների մրցույթում:




Իսկ ՀԿԵ տաղավարի հյուրերին դիմավորում և հյուրասիրում էր Ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալի օգնական Վահե Համբարձումյանը, ով ներառված չէր թիմի կազմում:

Շնորհավորում ենք մեր հաղթողներին և մաղթում խոհարարական նորանոր հաջողություններ, նոր օրիգինալ բաղադրատոմսեր և շնորհակալ համտեսողներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ
ՀԿԵ ՓԲԸ-ի կորպորատիվ ամսաթերթ

**Խմբագրական խորհուրդ**
Համարի պատասխանատու՝
**Վարդան ԱԼՈՅԱՆ**
Լուսանկարները՝
**Հարություն ՆԱԶԱՐՅԱՆԻ**

**Խմբագրության հասցե՝**
ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի պող. 50
**Հեռ.՝**
+374 10 57 50 02
**Էլ. փոստ՝**
pr@railway.am,
ukzhdpressoffice@inbox.ru

**Ծավալը՝**
2 տպագրական մամուլ
**Տպաքանակը՝**
600 օրինակ
**Ստորագրված է տպագրության՝**
24.12.2018
Տպագրված է «Կոլլաժ» ՍՊԸ հրատարակչությունում

ЮКЖД

Локомотив вашего бизнеса
www.ukzhd.am

# Железнодорожник АРМЕНИИ

# 15 (62)

Газета
ЗАО ЮКЖД

ОКТЯБРЬ-ДЕКАБРЬ, 2018



## Железные дороги Евразийского экономического союза подписали соглашение о сотрудничестве в области технического регулирования и метрологии

2 октября в Сочи в рамках Международного транспортно-логистического форума "PRO//Движение.1520" было подписано соглашение о сотрудничестве в области технического регулирования и метрологии между ОАО "Российские железные дороги", ГО "Белорусская железная дорога", АО "Национальная компания "Казахстан темир жолы", ГП "Национальная компания "Кыргыз темир жолу" и ЗАО "Южно-Кавказская железная дорога". От имени ОАО "РЖД" подпись под документом поставил заместитель генерального директора - главный инженер компании Сергей Кобзев, от имени ЗАО "ЮКЖД" - генеральный директор Сергей Валько.

Соглашение предусматривает сотрудничество сторон в области планирования, разработки, согласования, применения, пересмотра и отмены нормативных технических документов, устанавливающих требования к железнодорожной продукции, услугам на железнодорожном транспорте, а также к процессам, связанным с обслуживанием и содержанием технических средств, информационный обмен нормативными документами в области технического регулирования и метрологии, а также в области организации нормирования труда.



## Министры транспорта Армении и России обсудили вопросы работы Южно-Кавказской железной дороги

Встреча министра транспорта РФ Евгения Дитриха с и.о. министра транспорта, связи и информационных технологий Республики Армения Акопом Аршакяном прошла 22 ноября в Минтрансе России.

Министры отметили важность подписанного соглашения о создании и деятельности Международного бюро по расследованию авиационных происшествий и серьезных инцидентов и договорились незамедлительно приступить к внутригосударственным процедурам по вступлению документа в силу.

На встрече подчеркнута значимость ЗАО "Южно-Кавказская железная дорога" для экономики Армении. Стороны высоко оценили результаты его работы: существенное увеличение скоростей на железной дороге, снижение аварийности, развитие инфраструктуры.

Кроме того, речь шла о важности концессионного договора от 13 февраля 2008 г. о передаче железнодорожной системы Армении ЗАО "Южно-Кавказская железная дорога". Оно было создано ОАО "Российские железные дороги".

Министры отметили целесообразность доработки стратегии развития железных дорог Армении с привлечением ЮКЖД, с учетом взаимных обязательств по концессионному договору.

Затронуты вопросы совершенствования работы паромной переправы Кавказ - Поти - Кавказ, имеющей ключевое значение для двусторонних перевозок. Положительно оценены принятые меры по развитию пассажирских перевозок, в частности приобретение в этом году двух современных электропоездов ЭП2Д. Один из них курсирует с лета этого года по маршруту Ереван - Гюмри - Ереван. Второй будет запущен в эксплуатацию на том же маршруте в первом квартале 2019 года.

Армянская сторона высказала заинтересованность в запуске таких электропоездов по маршруту Ереван - Севан - Ереван.

В завершение министры обсудили темы совершенствования функционирования МАПП Верхний Ларс, а также развития автоперевозок с учетом предстоящего заседания смешанной комиссии по вопросам международного автомобильного сообщения.



## Делегация ЗАО "ЮКЖД" приняла участие в 69-ом заседании Совета по железнодорожному транспорту стран Содружества

Делегация ЗАО "Южно-Кавказская железная дорога" приняла участие в работе 69-го заседания Совета по железнодорожному транспорту государств-участников Содружества, которое проходило в Москве 18-19 октября. Делегацию ЮКЖД возглавлял генеральный директор Компании Сергей Валько.

В московском заседании принимали участие главы железнодорожных администраций Армении, Беларуси, Кыргызстана, Молдовы, России, Таджикистана, Туркменистана, Украины, Узбекистана, Азербайджана, а также представители ассоциированных членов Совета - руководители железнодорожных администраций Болгарии, Грузии, Латвии и Финляндии.

В работе Совета по отдельным договорам участвуют Литовская и Эстонская железные дороги, а в качестве наблюдателей - представители железнодорожной администрации Ирана и Международной Конфедерации профсоюзов железнодорожников и транспортных строителей.

В рамках совещания рассмотрены 12 вопросов, среди которых, в частности, итоги эксплуатационной работы сети железных дорог и пассажирского комплекса в международном сообщении за 9 месяцев 2018 года, разработка графика движения поездов, плана формирования грузовых поездов и плана формирования вагонов с контейнерами в международном сообщении в 2018/2019 год, тарифная политика железных дорог на перевозки грузов в международном сообщении на 2019 фрахтовый год.

# ЮКЖД и GPM Gold заключили договор об организации перевозок золотоносной руды в 2019 году



**Генеральный директор ЗАО «Южно-Кавказская железная дорога» Сергей Валько и генеральный директор ООО GeoProMining Gold Анатолий Гоготин 14 декабря 2018 года подписали договор об организации в 2019 году перевозок золотоносной руды с Сотского месторождения на Араратскую золотоизвлекательную фабрику.**

Согласно договору, в 2019 году объем перевозимой руды по маршруту Зод-Арарат протяженностью 269 километров составит 1,5 млн тонн, что на 10% больше показателя 2018 года. В 2017 году на данном направлении было обработано 1,18 млн тонн руды.

Как отметил генеральный директор ЗАО «ЮКЖД» Сергей Валько, GeoProMining Gold является одним из основных партнеров железной дороги, а перевозки золотоносной руды составляют почти половину общего объема грузоперевозок компании.

«Для обеспечения бесперебойных перевозок по данному маршруту Южно-Кавказская железная дорога уделяет особое внимание состоянию пути на этом направлении: капитально отремонтировано 7 км пути, за последние три года в путь уложено 50 тысяч железобетонных шпал, модернизированы системы сигнализации, централизации и блокировки, восстановлена не эксплуатировавшаяся с 1989 года ЭЦ станции Зод. Стоимость только последнего проекта составила 50 млн драмов, а в капитальный ремонт пути инвестировано 800 млн драмов. Осуществленные работы позволили осуществлять перевозки сырья по маршруту Зод-Арарат в соответствии с графиком, повысить скорости движения поездом, обеспечить сохранность грузов», - сказал руководитель железной дороги, отметив, что данный проект стал одним из ярких примеров взаимовыгодного сотрудничества двух компаний.

При этом С.Валько сообщил, что разрабатывается также программа обновления подвижного состава, и в предстоящие три года ЮКЖД планирует приобрести около 200 новых вагонов, в основном тех типов, которые наиболее востребованы GPM Gold.

В свою очередь генеральный директор ООО GeoProMining Gold Анатолий Гоготин отметил, что заключенный договор не просто позволит нарастить на 10% объемы перевозок руды на золотоизвлекательную фабрику, но и увеличить на 50 человек штат рабочих, что в свою очередь положительно скажется на социальной ситуации в регионе.

«GeoProMining Gold и ЮКЖД активно наращивают взаимовыгодное сотрудничество, из года в год фиксируют рост отчислений в госбюджет Армении и обеспечивают занятость более 4000 человек. Наши компании работают совместно уже 10 лет, и если в начале нашего сотрудничества объемы перевозок составляли 10-17 вагонов в организованном поезде, то сейчас их число достигает уже 30-ти. Уверен, что наступающий 2019 год также будет способствовать нашему взаимодействию, без которого уже сложно представить успешную деятельность наших компаний», - заявил А.Гоготин.

По итогам первого полугодия 2018 года Компания GeoProMining Gold выплатила налогов в государственный бюджет Армении в объеме 8,871 млрд драмов, заняв 4 позицию в списке крупнейших налогоплательщиков республики (8,163 млрд за аналогичный период 2017 года). ЮКЖД за тот же период выплатила налогов в объеме 1,963 млрд драмов, заняв 39 позицию в рейтинге крупнейших налогоплательщиков Армении (1,887 млрд драмов за I полугодие 2017 года).

Компания GeoProMining Gold входит в международную Группу компаний GeoProMining. В 2007-2017 гг. Араратская золотоизвлекательная фабрика и Сотское месторождение были полностью модернизированы. С 2008 года компания направила $200 млн на техническое переоснащение Сотского месторождения и реконструкцию Араратской фабрики. В настоящее время в Компании работает 1 240 человек, из которых 753 - на Сотском месторождении, 432 -на Араратской фабрике.

В целом за 10 лет работы в Армении инвестиции GeoProMining превысили $500 млн.

ЗАО «Южно-Кавказская железная дорога» является 100%-ной дочерней компанией ОАО «Российские железные дороги» и с 2008 года осуществляет концессионное управление железными дорогами Армении. В 2008-2017 гг. в развитие инфраструктуры и подвижного состава Компанией было инвестировано $260 млн. ЮКЖД является одним из крупнейших работодателей Армении с коллективом свыше 3 тысяч человек.

# ЮКЖД продолжает принимать заявки на перевозку грузов по маршруту Кавказ-Поти-Кавказ



ЗАО "Южно-Кавказская железная дорога" продолжает принимать заявки на перевозку грузов по маршруту Кавказ-Поти-Кавказ. Ближайший рейс парома ожидается 2 декабря текущего года. Компания уже получила заявки на перевозку 9 вагонов из порта Кавказ в порт Поти.

Компания напоминает, что в информационном письме от 05.11.2018г., направленном в адреса грузоотправителей и экспедиторов, было сообщено о временном уменьшении количества ежемесячных рейсов. В связи с ростом стоимости фрахта парома и уменьшением грузовой базы, регулярное курсирование парома Кавказ-Поти-Кавказ будет изменено на перевозки по фактическому накоплению крупных партий (30 вагонов), а также на выполнение разовых заявок клиентов.

Как сообщалось ранее, ничего принципиального в работе ЮКЖД по части перевозок по маршруту порт Кавказ - порт Поти не изменилось. Любая заинтересованная компания может заказать перевозки по данному маршруту.

Также необходимо отметить, что в целях сохранения конкурентоспособности железнодорожно-паромного сообщения в ноябре РЖД и Федеральная тарифная служба РФ утвердили скидки для перевозки грузов по маршруту Порт Кавказ-Поти на 2019 год в объеме до 50%.

# ЗАО "ЮКЖД" признана лучшей компанией в отрасли на международной торгово-промышленной выставке "ПанАрмениан Экспо - 2018"

ЗАО "Южно-Кавказская железная дорога" признано лучшей компанией в отрасли по итогам девятой международной многопрофильной выставки-форума "Панармениан Экспо - 2018", которая прошла в Ереване 12-14 октября и была организована Торгово-промышленной палатой Армении и компанией "Промэкспо".

Представителям компании были вручены соответствующие сертификаты и награда "Лидер в отрасли".

В выставке "Панармениан Экспо - 2018" приняли участие более 100 компаний из Армении, Арцаха, России, Германии и Индии, представляющих сферы промышленности, грузоперевозок, сельского хозяйства, туризма, услуг, издательского дела, текстиля, строительства.

Посетители павильона Южно-Кавказской железной дороги могли ознакомиться с подробной информацией об основных направлениях деятельности ЮКЖД, перспективах развития грузовых перевозок, в том числе мультимодальных в направлении из Ирана в европейские страны и обратно, а также о программах развития железнодорожного транспорта Армении, географии железнодорожных пассажирских перевозок, предлагаемых туристических продуктах.












# При содействии ЮКЖД завершен очередной этап восстановления детского сада №3 города Алаверди

**Завершена очередная благотворительная программа ЗАО "Южно-Кавказская железная дорога" – восстановление детского сада №3 города Алаверди, расположенного на станции Санаин в Лорийской области.**



При содействии железной дороги и других благотворителей отремонтирован, оснащен необходимой мебелью, системой отопления, бытовой техникой новый корпус детского сада, который вскоре примет маленьких воспитанников.

На церемонии открытия присутствовали Чрезвычайный и Полномочный посол России в Армении Сергей Копыркин, генеральный директор ЗАО "ЮКЖД" Сергей Валько, мэр города Алаверди Сасун Хечумян, руководитель торгового представительства России в Армении Андрей Бабко и др.

Как отметил посол Сергей Копыркин, несмотря на то, что Южно-Кавказская железная дорога занимается эксплуатацией железных дорог Армении, компания уделяет большое внимание сфере благотворительности.

"То, что сделала ЮКЖД совместно с армянскими партнерами, органами местной власти, дирекцией детского сада заслуживает высокой оценки. Подобная деятельность этой и других российских компаний, работающих в Армении, является существенным вкладом в укрепление вековых дружеских, братских армяно-российских отношений", - сказал посол.

Генеральный директор ЗАО "ЮКЖД" Сергей Валько в свою очередь напомнил, что это уже не первый опыт поддержки данного дошкольного учреждения: два года назад компания совместно с несколькими другими благотворителями отремонтировала здание детского сада. Тогда при содействии железной дороги полностью был отремонтирован первый этаж здания, изготовлена детская мебель.

"Сегодняшний праздник - очередной шаг нашей двухлетней работы, нашего содействия детскому саду и малышам Санаина. Надеюсь, что осуществленные нами работы позволят увеличить число детей, посещающих детский сад, и вместо 35 детей здесь будет уже 50 воспитанников", - сказал руководитель компании.

При этом гендиректор ЮКЖД сообщил, что на восстановительные работы компания направила 22 млн драмов, а общий бюджет концессионера железной дороги Армении в сфере благотворительности с 2011 года составил 318 млн драмов.

Сфера благотворительности всегда была и продолжает оставаться одним из наиболее важных направлений деятельности Южно-Кавказской железной дороги. Компания продолжает осуществлять проекты, направленные на оказание содействия образовательным учреждениям - школам и детским садам - а также ветеранам, воспитанникам детских домов и интернатов.

Так, на выделенные железной дорогой средства в школе села Фиолетово отремонтирован и оснащен современным оборудованием кабинет трудового обучения, заменены окна и отремонтирован вестибюль второго этажа школы, оснащен необходимой техникой класс интерактивного обучения, восстановлена кровля здания, ряд классных комнат, не эксплуатировавшийся более 20 лет - после землетрясения в Армении - спортивный зал, осуществлен косметический ремонт обоих корпусов здания. А школьная библиотека ежегодно пополняется новыми учебниками и методическими материалами, художественной литературой.

Также не остаются без внимания и ветераны-железнодорожники: Южно-Кавказской железной дорогой отремонтировано уже пять домов и квартир участников Великой Отечественной войны в Гюмри, селе Солак Котайкской области и Ереване.



# Продолжается автоматизация движения на железной дороге

**Комиссия ЗАО "Южно-Кавказская железная дорога" во главе с генеральным директором Сергеем Валько провела смотр на участке Севан-Зод на предмет подготовки инфраструктуры к работе в зимний период.**



Кроме того, комиссия проверила график исполнения работ по проекту восстановления полуавтоматической системы блокировки на основе микропроцессорных технологий на участке Шоржа-Зод, не действующей с начала 90-х гг. В рамках проекта на участке Севан-Зод было смонтировано 135 километров оптико-волоконных кабелей. В целом в проект было инвестировано 96,4 млн драмов. С завершением соответствующих работ в декабре месяце будет обеспечено безостановочное движение по всей протяженности маршрута Арарат-Зод.

Участок Севан-Зод стал завершающим этапом восстановления СЦБ (сигнализация, централизация, блокировка) по этому маршруту. Внедрение электрической централизации (ЭЦ) стрелок и сигналов на станции Зод позволило сократить ручной труд и время маневрирования подвижного состава и повысить безопасность движения поездов, а также перейти к использованию более современной оптоволоконной системы связи.

До этого, в декабре 2017 года была восстановлена ЭЦ (не работала с начала 90-х гг.) на станции Кармир Блур в Ереване, было установлено более 500 новых приборов. Все работы были выполнены без привлечения сторонних организаций и исключительно за счет повышения квалификации сотрудников ЮКЖД (подразделение "Предприятие автоматики, телемеханики и связи").

В целом за годы работы ЮКЖД на железной дороге восстановлено 9 постов ЭЦ, в том числе 3 поста - с нуля (на станциях Зод, Кармир Блур и Даларик). С 2008 года в модернизацию устройств автоматики, телемеханики и связи ЮКЖД было инвестировано более 3,5 млрд драмов.

Программой дороги за 2019 год предусмотрена модернизация поста ЭЦ станции Калтахчи, в том числе строительство нового здания для улучшения условий труда всех категорий работников станции.



# ПОЗДРАВЛЯЕМ НАШИХ ЮБИЛЯРОВ

## 50

**07.11.1968** Мкртумян Арам Завенович. Ванадзорская дистанция пути. Монтер пути
**03.12.1968** Папикян Меружан Пайлакович. Гюмрийская дистанция пути. Монтер пути
**20.11.1968** Барсегян Хачатур Размикович. Гюмрийская дистанция пути. Машинист дрезины
**16.11.1968** Авдалян Арсен Гайкович. Севанская дистанция пути. Монтер пути
**25.11.1968** Давтян Андраник Рудикович. Массиская путевая машинная станция. Машинист дрезины
**01.11.1968** Келешян Арутюн Варданович. Предприятия электрофикации и электроснабжения. Электромонтер
**16.01.1969** Паремузян Липарит Вруйрович. Предприятия электрофикации и электроснабжения. Дежурный электромеханик
**02.01.1969** Алексанян Оганес Рафикович. Предприятия автоматики, телемеханики и связи. Старший электромеханик
**01.01.1969** Акопян Ануш Арменаковна. Линейно-станционное объеденение "Ванадзор". Начальник станции
**08.11.1968** Мкртчян Ваагн Карленович. Линейно-станционное объединение "Севан". Дежурный по станции
**11.01.1969** Саакян Араик Юрикович. Гюмрийское локомотивное депо. Машинист маневровых работ при депо
**21.01.1969** Бабаян Сурен Фронтикович. Гюмрийское вагонное депо. Старший осмотрщик-ремонтник вагонов
**05.01.1969** Варданян Карине Мартиковна. Служба безопасности. Экономист
**16.12.1968** Оганян Тигран Сейранович. Служба безопасности. Заместитель начальника команды

## 60

**10.01.1959** Мацакян Сейран Владимирович. Ванадзорская дистанция пути. Дежурный по переезду
**02.01.1959** Даниелян Мкртич Бабкенович. Гюмрийская дистанция пути. Монтер пути
**14.12.1958** Маргарян Гарник Мкртычевич. Гюмрийская дистанция пути. Монтер пути
**25.01.1959** Валесян Валес Арпакович. Гюмрийская дистанция пути. Освобожденный бригадир
**05.01.1959** Хачатрян Норайр Жораевич. Ереванская дистанция пути. Монтер пути
**02.12.1958** Мкртчян Сашик Ашотович. Севанская дистанция пути. Монтер пути
**02.12.1958** Асатрян Владик Айказович. Севанская дистанция пути. Машинист автомотрисы АС-1А
**30.12.1958** Рштунян Левон Антонович. Севанская дистанция пути. Сторож
**21.12.1958** Акобян Самвел Жораевич. Санаинская механизированная дистанция пути. Водитель путеремонтной автомашины
**15.12.1958** Алекян Гамлет Хачатурович. Предприятия электрофикации и электроснабжения. Старший электромеханик
**31.01.1959** Чамакян Мартун Карленович. Предприятия электрофикации и электроснабжения. Дежурный электромеханик
**04.11.1958** Галечян Артуш Аршалуйсович. Предприятия электрофикации и электроснабжения. Дежурный электромеханик
**05.01.1959** Егиазарян Ваник Дереникович. Предприятия электрофикации и электроснабжения. Дежурный электромеханик
**26.11.1958** Оганесян Альберт Осипович. Предприятия автоматики, телемеханики и связи. Электромеханик
**21.12.1958** Варданян Гайк Анушаванович. Предприятия автоматики, телемеханики и связи. Старший электромеханик
**10.01.1959** Карапетян Марат Грачикович. Предприятия автоматики, телемеханики и связи Дежурный электромеханик
**16.12.1958** Амирян Самвел Сережаевич. Дирекция пассажирских перевозок. Билетный кассир электропоездов
**10.11.1958** Григорян Маргарит Бабкеновна. Дирекция по перевозкам. Ведущий экономист
**05.01.1959** Петросян Меружан Бурдукович. Линейно-станционное объединение "Ванадзор". Главный кондуктор
**17.01.1959** Каяян Овсеп Григорьевич. Линейно-станционное объеденение "Ереван". Главный кондуктор
**30.01.1959** Карапетян Андраник Арташевич. Гюмрийское локомотивное депо. Помощник машиниста электровозов
**24.01.1959** Шолинян Гагик Сандроевич. Гюмрийское локомотивное депо. Машинист тепловоза
**01.01.1959** Эламирян Норайр Жоржикович. Гюмрийское локомотивное депо. Машинист электровозов
**24.01.1959** Аракелян Сусанна Нверовна. Гюмрийское локомотивное депо. Дежурный дома отдыха локомотивных бригад
**16.11.1958** Асрян Айказ Дурмишевич. Гюмрийское вагонное депо. Старший осмотрщик-ремонтник вагонов
**18.11.1958** Косян Самвел Ашотович. Восстановительных и противопожарных поездов. Такелажник
**06.01.1959** Айрапетян Назик Хачиковна. Гюмрийское вагонное депо. Уборщик

ЮКЖД

**ЖЕЛЕЗНОДОРОЖНИК АРМЕНИИ**
Корпоративная газета
ЗАО ЮКЖД

**Редакционная коллегия**
Ответственный за номер:
**Вардан АЛОЯН**
Фотографии:
**Арутюн НАЗАРЯН**

**Адрес редакции:**
РА, г. Ереван, пр. Тиграна Меца, 50
**Тел.:**
+374 10 57 50 02
**Эл. адрес:**
pr@railway.am,
ukzhdpressoffice@inbox.ru

**Объем:**
2 печатных листа
**Тираж:**
600 экземпляров
**Подписано в печать**
24.12.2018
Отпечатано в типографии
ООО "КОЛЛАЖ"

# Команда ЮКЖД одержала победу в конкурсе на лучшее приготовление блюд русской кухни

**Команда ЗАО "Южно-Кавказская железная дорога" стала победителем в конкурсе на лучшее приготовление блюд русской кухни, организованном Московским культурно-деловым центром "Дом Москвы" в Ереване.**

В конкурсе, который состоялся 7 октября в Детском парке, соревновалось семь команд, представлявших посольство России в Армении, Российский центр науки и культуры в Ереване, банк "ВТБ-Армения", ЗАО "Южно-Кавказская железная дорога", завод "Русал-Арменал", Ереванский русский драматический театр им. К.С.Станиславского, информационное агентство и радио "Спутник Армения".

Под теплыми лучами октябрьского ереванского солнца и веселые звуки русских народных песен конкурсанты продемонстрировали свои кулинарные таланты в приготовлении традиционных русских блюд - ухи и блинов, а лучших выбрало авторитетное жюри, которое возглавила московский ресторатор Гаяне Бреиова.

В результате лучшими стали команда ЮКЖД, занявшая первое место и набравшая 183 балла от жюри, "РУСАЛ-Арменал" со 178 баллами на втором месте, а тройку лидеров замкнула команда театра имени К.С. Станиславского (170 баллов).




В состав команды железнодорожников вошли начальник Дорожного центра фирменного транспортного обслуживания Дмитрий Гвоздев, начальник отдела маркетинга, анализа и тарифной политики того же центра Лиана Закарян, заместитель начальника отдела международных связей и взаимодействия с административными органами Лиана Мовсисян, которая также заняла первое место в конкурсе на лучшее знание названий овощей и фруктов.

А обязанности по угощению гостей павильона ЮКЖД взял на себя не включенный в состав команды помощник первого заместителя генерального директора Компании Ваге Амбарцумян.



Поздравляем наших победителей и желаем им новых успехов на кулинарном поприще, новых оригинальных рецептов и благодарных дегустаторов!